«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 106 -Լ

2022թ. ապրիլի «29» ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետը և «Հայաստանի ֆիզիական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Ուսումնական գործընթացների կառավարման բաժնի կանոնակարգը համաձայն կից հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2022 թվականի ապրիլի 29 թիվ ___ որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) **Ուսումնական գործընթացների կառավարման** բաժնի (այսուհետ՝ Բաժին) կանոնակարգը սահմանում է Բաժնի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, իրավասությունները, բաժնի ղեկավարի և աշխատողների իրավունքներն ու պարտականությունները և պատասխանատվության շրջանակը:
2. Բաժինը իր գործունեությունն իրականացնում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, Ինստիտուտի կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան:
3. Բաժինը ունի կնիք և ձևաթուղթ:
4. Բաժինը վերակազմավորվում կամ լուծարվում է համաձայն ինստիտուտի կանոնադրության:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական նպատակն է՝ պլանավորել, կազմակերպել և վերահսկել ուսումնական գործընթացը:
6. **Բաժնի խնդիրներն են՝**
   1) Ուսումնական գործընթացի կազմակերպման ներքին իրավական ակտերի (ուսումնական պլաններ, ուսումնական գործընթացի տարեկան ժամանակացույց) նախագծերի կազմում, և հաստատման ներկայացում:
   2) Պրոֆեսորադասախոսական կազմի կիսամյակային և տարեկան բեռնվածության կազմում, հաշվառում և համակարգում: Պլան-կատարողականի ստուգում:
   3) Ինստիտուտի լսարանային ֆոնդի պլանավորում, ուսումնական գործընթացի լսարանային ապահովման նպատակով՝ լսարանային ֆոնդի հաշվառում և նպատակային բաշխում:
   4) Գործող օրենսդրության, կանոնակարգերի, գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումների, հրամանների և ինստիտուտում հաստատված այլ նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ ուսումնական և քննական գործընթացների կազմակերպում և դրանց նկատմամբ վերահսկողություն:
7. **Բաժնի գործառույթներն են՝**
   1) Ուսումնական պլանների, ուսումնական գործընթացի տարեկան ժամանակացույցի, դասատախտակների, քննատախտակների կազմում, ձևավորում և հաստատման ներկայացում,
   2) ՊԴԱ տարեկան բեռնվածության կազմում, ըստ ամիսների՝ կատարողական ակտերի ստուգում,
   3) Ընդունելության, միջանկյալ և ամփոփիչ գրավոր ծածկագրված քննությունների կազմակերպում,
   4) Ուսումնական տարվա կտրվածքով դասալսումների կազմակերպում (ժամանակացույցի կազմում և հաստատում, գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացում),
   5) Լսարանային և առցանց դասերի վերահսկում,

6) Բաժնի գործունեությանը վերաբերելի ներքին իրավական ակտերի և դրանց փոփոխությունների նախագծերի կազմում և ներկայացում համապատասխան մարմնի հաստատմանը,

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Բաժնի կառուցվածքը սահմանվում է Ինստիտուտի հաստիքացուցակով:
9. Բաժնի ղեկավարի և աշխատողների աշխատանքային իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Ինստիտուտի ներքին իրավական այլ ակտերով և աշխատանքային պայմանագրերով և աշխատանքի նկարագրերով:
10. Բաժնի ղեկավարումը իրականացնում է բաժնի ղեկավարը՝ համաձայն Ինստիտուտի կանոնադրության, սույն կանոնակարգի և իրավական այլ ակտերի:
11. Բաժնի ղեկավարին նշանակում և ազատում է Ինստիտուտի ռեկտորը:
12. Բաժնի աշխատանքները համակարգում է ուսումնագիտական գծով պրոռեկտորը, ում անմիջապես ենթակա և հաշվետու է Բաժնի ղեկավարը:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

13. Բաժնի ղեկավարը և աշխատողները պարտավոր են պահպանել Ինստիտուտում գործող ներքին իրավական ակտերը, սահմանված ժամկետներում, բարեխղճորեն և պատշաճ հետևողականությամբ կատարել Ինստիտուտի ռեկտորի կողմից իրենց տրված հանձնարարականները և կարգադրությունները:
14. Բաժնի ղեկավարը և աշխատողները պատասխանատու են իրենց վրա դրված գործառույթների ժամանակին և պատշաճ կատարման համար:
15. Բաժնի ղեկավարը և աշխատողները իրենց վրա դրված պաշտոնեական պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
16. Բաժնի աշխատողները պարտավոր են ապահովել իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկատվության

գաղտնիությունը: Դրանք հրապարակելու դեպքում նրանք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

17. Բաժնի աշխատողների գործառութային պարտականությունները սահմանվում են պաշտոնի նկարագրերով:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրվանից:

19. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ: